ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Կաթուղիկոսական ընտրութիւն (տես յաւելուած).

(Տաճկաստանի հայոց լրագրերից)

Պատրիարքի ընտրութիւն.

Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքական փոխանորդը դեկտ. 5-ին հեռագրով յայտնում է Ամենապատիւ Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին, թէ ուրբաթ օրը, դեկտմ. 2-ին Ազգ. Երեսփ. Ժողովը պատրիարք է ընտրել Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունեան։ Ամեն. Տ. Տեղակալը շնորհաւորեց նորընտիր պատրիարքին և այս աւետաւոր լուրը հիւրընկալի միջոցով յայտնեց Տաճկաստանից եկած. կաթուղիկոսական ընտրութեան, պատգամաւորներին, որոնք նոյնպէս շնորհաւորական հեռագիր ուղարկեցին։

Հոգեւորականների համագումար ժողով.

Հոկտեմբերի 20-ին տեղի է ունեցել Կ. Պոլսոյ հոգեւորականների համագումարը պատրիարքական ընտրելիների ցանկը կազմելու համար, 59 հրաւիրուածներից ներկայ են եղել 36-ը։ Նախագահում էր Տեղապահ Սրբազանը. ընտրուեցին, առաջնապետ՝ Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունի և դիւանապետ՝ Գեղամ վարդ.։ Քուէարկութեան մասնակցել են 35 հոգի և արդիւնքը եղել է.

1. Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունի 22 քուէ.
2. Մատեփան արքեպիսկոպոս Յովակիմեան 19 »
3. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան . . 16 »
4. Գէորգ արքեպիսկոպոս Երէցեան (ցանկից դուրս) 11 քուէ.
5. Յովսէփ արքեպիսկոպոս Սարաճեան . 10 »
6. Գաբրիէլ եպիսկոպոս Ճէվահիրճեան . 10 »

7. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան . 9 »
8. Զաւէն եպիսկոպոս Եղիայեան . 9 »
9. Սմբատ եպիսկոպոս Սատաէթեան . 7 »
10. Վահրամ արքեպիս. Մանկունի . 6 »
11. Թորգոմ եպիս. Գուշակեան . . 4 »
12. Տրդատ եպս. Պալեան . . 2 »
13. Գրիգորիս արքեպս. Յովհաննէսեան . 2 »
14. Մաղաքիա եպս. Տէրունեան . . 2 »
15. Յակոբ եպս. Աշոտ-Փափազեան . 2 »
16. Ներսէս եպս. Խարախանեան . . 2 »
17. Եղիշէ եպս. Չիլինգիրեան . . 2 »
18. Դանիէլ արքեպս. Յակոբեան . 2 »
19. Բարգէն եպս. Կիւլէսէրեան . . 2 »
20. Մովսէս եպս. Կէօմրիւքճեան . . 2 »
21. Մաղաքիա արքեպս. Օրմանեան (ցանկից դուրս) . . . . . 1 »

Պոլսոյ պատր. ընտրելեաց ցանկը.

Քաղաք, ժողովը ուրբաթ, հոկտեմբերի 28-ին կազմել է ընտրելիների հնգանուն ցանկը։ Նիստին ներկայ են եղել 8 անդամներ.

Վերջին քուէարկութեան արդիւնքը եղել է.

Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունի . 6 քուէ
Վահրամ արքեպս. Մանկունի. . . . 5 »
Յովսէփ արքեպս. Սարաճեան . . . 5 »
Բարգէն եպս. Կիւլէսէրեան . . . 6 »
Սմբատ եպս. Սատաէթեան . . . 6 »

Պատր. ընտրելիների այս հնգանուն ցանկը պէտք է ներկայացուի Ազգ. ժողովի առաջիկայ նիստին, օրակարգ անցնելու համար։

Պատգամաւորութիւն Բ. Դրան մօտ.

Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանը երէք անդամ ունկնդրութիւն էր խնդրել վարչապետ Սայիդ փաշայից։ Հուսկ ուրեմն ժամադրուած պահուն, հոկտեմբերի 12-ին

Տեղապահ Սրբազանը ուղեկցութեամբ կրօնական ժողովի անդամ Արշարունի Յովհաննէս արքեպիսկոպոսի, Քաղաքական ժողովի ատենապետ Գէորգ էֆ. Ասլանեանի և գործակատար Գամէր էֆ-ի. գնաց Բ. Դուռը, ուր մի առժամանակ սպասեց մինչև որ գատական Նախարար Թայրի-Բէյը դուրս գալով յայտնեց, որ Տրիպոլիսի պատճառով Նախարարների արտակարգ խորհուրդ է և վարչապետի կողմից պաշտօն ունի պատգամաւորութեան խնդիրը գրի առնել կարգադրելու համար.

Պատգամաւորութիւնը յիշեցրեց—որ գաւառների մէջ տակաւին սպանութիւններ և բռնութիւններ շարունակւում են և շատ տեղեր ժողովուրդը սարսափի մէջ է. պատգամաւորութիւնը խնդրեց ի նկատ առնել պատրիարքարանի մի թագրիրը որի մէջ հիմնական միջոցներ են առաջարկուած —այն է հողային խնդրի լուծումն ու հակասահմանադրական պաշտօնեաների փոփոխութիւնը։

Թայրի-Բէյը նշանակելով այս խնդիրը, իւր կողմից աւելացրել է, որ Ներքին Գործերի նոր Նախարարը խիստ հրահանգներ է տուել գաւառները անդորրութեան մէջ պահելու։

Պատգամաւորութիւնը յայտնեց որ Տիգրանակերտի թեմերից, Նիբկերտից, հասած մի գրի համեմատ տեղի գայմագամը Ս. Թադէոս առաքեալ եկեղեցու քարերն ու մոզայիկները տանում է մզկիթի շինութեան համար, իսկ Բաղէշի Ապարանից Ս. Խաչ վանքը, ուր շատ ձեռագրեր կան, քրդերը գրաւել են. այս բաները վիրաւորում են ազգի կրօնական զգացումը, մանաւանդ երբ կառավարութիւնն ինքն անտարբեր է մնում, և յանցաւոր պաշտօնեաներն անպատիժ։

Որ Հասան Բէյլիի եկեղեցու քանդման խնդիրը դեռ առկախ է մնացել, որ զինուորական և կրթական խնդիրների համար մատուցուած հաւաքական թաղրիրի հիման վերայ մի կարգադրութիւն դեռ չի եղել. որ հողային խնդրի և Բանկալթիի գերեզմանատան գործի համար կարգադրութիւն անելու ժամանակ է։

Դատական Նախարարը մի առմի նշանակելով պատուիրակութեան խօսքերը յայտնեց, թէ կը զեկուցանի վարչապետին հարկաւոր կարգադրութիւնը անելու։

—Հոկտեմբ. 14. Քաղաքական ժողովը ի նկատի ունենալով որ մեծ եպարքոս Սայիդ փաշան, չնայելով որ երկու անգամ ունկնդրութիւն էր խնդրուած և երրորդ անգամին ժամադրութիւն էր նշանակել, բայց այնուամենայնիւ չէր ընդունել Տեղապահ Սրբազանին, այդ բանը համարելով արհամարհանք ազգային իշխանութեան դէմ յայտնեց իւր ցաւն ու դժգոհութիւնը և որոշեց մի թաքրիրով ներկայացնել նոյն խնդիրները, որոնք ստիպողական հանգամանք են ստացել, և անմիջական տնօրինութիւն խնդրել։

Միջազգային պատուիրակութիւնը վարչապետի մօտ։

Կրթական և զինուորական խնդիրների համար պատրիարքարանների կողմից եղած հաւաքական դիմումն որ և է արդիւնք չէր ունեցել, ուստի և հոկտեմբերի 18-ին հայ և յոյն պատրիարքարանների և բուլգարների էգզարխարանի կողմից խառն մի պատուիրակութիւն ներկայացաւ վարչապետ Սայիդ փաշային։ Մեր պատրիարքարանի կողմից նշանակուած էին Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունի և Միհրդատ էֆ. Հայկազն։ Վարչապետը իսկոյն ընդունել է պատգամաւորութիւնը և տեղեկացել է խնդրին։

Յովհաննէս Սրբազանը բացատրել է զինուորական և կրթական խնդիրները, խնդրելով՝ որ ուսուցիչներն ու ուսանողները ազատուեն զինուորութիւնից, ազատ լինեն զինուորութիւնից և հայ դպիրները, օրպիսի արտօնութիւն տրուած է արդէն յոյն դպիրներին։

Սայիդ փաշան խառն պատուիրակութեան իւրաքանչիւր անդամին լսելուց յետոյ խոստացել է մատուցուած ծրագիրը ներկայացնել նախարարների խորհրդին ու հարկաւոր կարգադրութիւնն անել. խոստանալով ազգերի հաւասարաչափութեան նուիրել իւր ջանքերը և այդ մասին անել՝ ինչ որ կարող է։

Պատգամաւորները խօսել են գաւառների մէջ պատահած սպանութիւնների մասին, յայտնելով որ այն գաղափարը կայ, թէ այդ դիտաւորեալ կերպով է կատարւում։

Վարչապետը հերքել է և ասել, որ մի երկիր չի կարող իր ՀԷասին աշխատել, ուրեմն և անտեղի են կասկածները. ապահովացրեց, որ կառավարութիւնը արդէն զբաղւում է այս խնդիրներով և արդիւնքը հետզհետէ կը տեսնուի։

Պատուիրակութիւնը մեկնելու պահին Սայիդ փաշան ցաւ յայտնեց, որ անցեալ օր Նախարարների խորհրդի գումարման պատճառով մեր Տեղապահ Սրբազանի հետ չէր կարողացել տեսնուել, և այդ պարագան տարբեր մեկնութիւն է առել. ներողութիւն է խնդրել և պատուիրակութեան միջոցով հրաւիրել է Տեղապահ Սրբազանին տեսակցելու։

Հայ դպիրները ենթակայ զինուորութեան.

Բիւզանդիոնը (17 հոկտմ.) հաղորդում է, որ պատերազմական Նախարարութիւնը դպիրների զինուորութիւնից ազատուելու առաջարկը մերժել է. մինչդեռ յոյն դիաքոսները ազատ են։ Լրագիրը աւելացնում է. «Արդեօք քրիստոնեայ ազգերի համար մի և նոյն չափն ու կշիռը գործածել պէտք չէ»։ . . . Տարակոյս չունենք թէ այս խնդիրը վերստին նկատողութեան պիտի առնուի Ազգ. Վարչութեան կողմէ և այս պարագաները բացատրող նոր դիմում մը պիտի ըլլայ»։

Կաթուղիկոսական պատգամաւորի ընտրութիւն.

Ազգ. Երեսփոխանական ժողովը գումարուել է հոկտեմբերի 14-ին։ Լրագրները առհասարակ նկատում են երեսփոխանների անհոգութիւնն ու անպարտաճանաչութիւնը ժողովի նիստերին յաճախելու վերաբերութեամբ, ոմանք կամ այն է որ ժողովի չեն դալիս կամ այն, որ գալով ստորագրում են ներկայութեան թղթին ու մեկնում, և մեծ մասամբ նշանակուած ժամից ուշ են համախմբւում։

Այս անգամ ժողովի նիստը բացուել է Սրբազան Տեղապահի նախագահութեամբ և Մանուկ էֆ. Ազարեանի ատենապետութեամբ. սկզբում ներկայ երեսփոխանների թիւն էր 47, որ յետոյ հասաւ 73-ի։

Օրակարգի խնդիրն էր կաթուղիկոսական ընտրութեան կենտրոնի պատգամաւորի ընտրութիւնը։ Պատգամաւորի պաշտօնի վերաբերութեամբ եղած բանաձևերից 27 քուէով ընդունուել է Մինրդատ Հայկազն, Խոսրովեան, Էսմէրեան, Վռամեան հետևեալ բանաձևը.

«Ազգ. ժողովը յետ երկար և հասուն խորհրդակցութեան կոչոշէ ազատ թողուլ իր պատգամաւորը առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեան մէջ։ Սակայն միւս կողմէ Ազգ. ժողովը բարոյական պարտականութեան տակ կը դնէ ինչպէս իւր պատգամաւորը, նոյնպէս Բոլոր Թրքահայ պատգամաւորները, բացարձակապէս քուէ չտալ այն եկեղեցականներուն, որոնք կամ ամբաստանութեան տակ են, և կամ ընդհանուր համակրանք գրաւած չեն ազգի մէջ»։

Կարճ դադարից յետոյ 59 քուէարկուների մասնակցութեամբ պատգամաւորի ընտրութիւն կատարուեց, որ ունեցաւ հետևեալ արդիւնքը.

Ալէքսանդր Փանոսեան . . .	26 քուէ.
Օննիկ Զիֆթէ-Սարաֆ. . . .	25 »
Հրանտ Աստուր	2 »
Պարգև Փափազեան	1 »
Դոք. Վ. Թորգոմեան. . . ,	1 »
Սպիտակ	4 »
	59

Ոչ ոք չէր շահել մեծամասնութիւն, հարկ էր երկու առաջինների վերայ կատարել քուէարկութիւն, բայց ժամանակը ուշ լինելու պատճառով որոշուեց թողնել քուէարկութիւնը յաջորդ նիստին, որ գումարուելու էր առաջիկայ ուրբաթ օրը։—Պատգամաւոր ընտրուել է Օննիկ Զիֆթէ-Սարաֆ։

Հաւաքական թաղրիրի պատասխանը.

«Պատրիարքարանները հաւաքական թաղրիրին պատասխանած է կառավարութիւնը։ Ի մէջ այլոց կընդունուի որ զինուո-

բագրութեան օրէնքը ոչ-իսլամներու լեզուով ալ հրատարակուի։ Քրիստոնեայ ուսանողներ զինուորական վարժարան պիտի ընդունուին, սա պայմանով որ դպրոցին դասերուն հետևելու չափ թուրքերէն գիտնան, իսկ գիտութեանց քննութիւնը իւրաքանչիւր ուսանող իր լեզուովը պիտի տայ, գիտական բառերն և տուութիւնները թուրքերէն արտասանելու պայմանով։ Իւրաքանչիւր զօրաբաժինի համար ամէն կրօնքէ մէյմէկ շրջուն պաշտօնեայ պիտի նշանակուի. ոչ-իսլամ զինուորներ որոշեալ օրերու մէջ իրենց աղօթատեղիները պիտի գրկուին. զինուորներու յուղարկաւորութիւնները՝ ռազմական պարագաներու մէջ՝ բանակին ամենէն մօտ գտնուած իրենց աղօթատեղիները պիտի կատարուին։ Ուրիշ պայմաններ ալ յիշուած են, զինուորական նոր օրինագծին տրամադրութեանց համաձայն։

Կրթական խնդրոյն մասին նշանակելի են հետևեալները։— Ցարդ արտօնագիր չունեցող ազգ. վարժարաններու արտօնագիր պիտի տրուի։ Նոյնպէս՝ նոր բացուած վարժարանի մը։ Դպրոցներու մէջ աւանդուելիք դասերու ծրագիրը Պատրիարքարաններն ու Առաջնորդարանները պիտի պատրաստեն, առանց պէտք է ներկայացուին կրթական նախարարութեան. ցորչափ ծրագիրը չփոխուի, հարկ չկայ ամէն տարի ներկայացնել։ Ուսուցիչներու և ուսուցչուհիներու վկայականները երբ Պատրիարքարաններու և Առաջնորդարաններու կողմէ վաւերացուած են, թէ՛ կրթական նախարարութեան և թէ Մէաբլիֆի պաշտօնեաներու կողմէ վաւերական պիտի նկատուին։ Այժմ պաշտօնի վրայ գտնուած օտարահպատակ ուսուցիչները պիտի շարունակեն պաշտօնավարել, բայց նախն. վարժարաններուն համար ասկէ վերջը չպիտի առնուի իսկ անկէ վեր վարժարաններու համար ի հարկին պիտի կրնայ առնուիլ, տեղային կառավարութեան գիտութեամբ։ Ոչ-իսլամ վարժարաններու վրայ կառավարութեան քննութեան իրաւունքը (ճազզր բէֆթիշ) նոյնութեամբ կը մնայ։ (Տաճար)

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Երուս. Պատրիարքի ընտրութեան համար եօթանուն ցանկ.

Հոկտեմբերի 14-ին տեղի է ունեցել Երուսաղէմի միաբանութեան ընդհանուր ժողովը պատրիարքական ընտրելեաց եօթանուն ցանկ պատրաստելու համար. արդիւնք եղել է.

1. Եղիշէ եպիսկոպոս Զիլինկիրեան	.	39 ձայն
2. Գէորգ եպս. Երէցեան	. . .	34 »
3. Տրդատ եպս. Պալեան	. . .	29 »
4. Եղիա վարդապետ	. . .	29 »
5. Գրիգորիս վարդապետ	. . .	28 »
6. Վահան վրդտ.	. . . .	26 »
7. Հմայեակ վրդտ.	. . . .	25 »

Տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսի անունը ընտրելիների ցանկի մէջ չկայ, կարծւում էր թէ ինքն է հրաժարուել, և պատրիարքական ընտրութիւնից յետոյ տկարութեան պատճառով կամենում է գնալ Եգիպտոս բուժուելու։

Երուսաղէմացիք իրանց ներքին կանոնադրութիւնը ի նկատի ունենալով՝ կազմել են ընտրելիների եռանուն ցանկ։ Ս. իսկ Կ. Պոլսոյ պատրիարքարանի կենդրոնական վարչութիւնը հիմնուելով Սահմանադրութեան կանոնների վերայ, կամենում է ի նկատի ունենալ միայն եօթանուն ցանկը առարկելով, որ Երուսաղէմի ներքին կանոնադրութիւնը նոյն իսկ վանքում կիրառութեան մէջ չէ եղել։

Ինչպէս երևում է յետոյ ստացուած տեղեկութիւններից՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում ցաւալի երկպառակութիւնը սուր կերպարանք է ստացել և դրա հետևանքով պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը հեռացել է վանքից, թէև Կ. Պոլսոյ կենտրոնական վարչութիւնը առաջադրել է վերադառնալ վանք և շարունակել իւր պաշտօնը, իսկ կենտրոնի նշանակած լիազօր Խոճասարեան էֆ. վերադարձել է Կ. Պոլիս։

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հայ-կաթոլիկ եպիսկոպոսների ձեռնադրութիւն.

Կիւրակէ, հոկտեմբերի 22ին, Ն. տ. Ս. Նիկողայոս Տոլեատինացու եկեղեցում Պողոս-Պետրոս ԺԴ. Թերզեան պատրիարքը, որ Հռովմում է գտնւում Հայ-կաթոլիկների